

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ


«ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԻԲԼԻՈԳՐԱՖԻԱ»

(XIX դարից մինչև Հայաստանում սովետական կարգերի հաստատումը)

Կազմեց՝ ՀՈՎՀ. ՊԵՏՐՈՍՅԱՆ, Հայկական ՍՍՌ Պետգրապատ, Երևան, 1953 թ.

Հայկական ՍՍՌ Պետական գրապատի վերահիշյալ աշխատության հրատարակումով ավարտվում է հեղինակի կազմած «Հայ գրականության բիբլիոգրաֆիան սկզբից մինչև մեր օրերը» ծավալուն աշխատությունը։ Այս շնորհնակալ աշխատության առաջին հատորը լույս է տեսել դեռևս 1941 թվականին՝ «Հայ հին և միջնադարյան գրականության համառոտ բիբլիոգրաֆիա» վերնագրով, որն իր մեջ ընդգրկում է 5—19-րդ դարի գրականությունը՝ հեղինակների երկերի նկարագրությամբ և քննադատական ու բանասիրական 1.600 նյութերով։

1949 թվականին ՀայկաՍՍՌ-ի հրատարակությամբ լույս տեսավ նույն հեղինակի կազմած երրորդ հատորը՝ «Սովետական գեղարվեստական գրականության բիբլիոգրաֆիա» խորագրով, որն իր մեջ պարունակում էր 80 հեղինակների երկերի և նրանց մասին հղած 8.000 քննադատական, գրախոսական նյութերի նկարագրություններ։ Ներկա աշխատությունը, որը կազմում է հեղինակի վերահիշյալ գործի երկրորդ հատորը, տալիս է 50-ից ավելի հայ հեղինակների երկերի ու նրանց մասին հղած 7.000 քննադատական, գրախոսական և բանասիրական նյութերի բիբլիոգրաֆիան։ Այսպիսով, առաջին անգամ հայ գրականության մեջ, հեղինակը ջանադիր աշխատանքով կարողացել է ի մի հավաքել և բիբլիոգրաֆական գիտական մշակման ենթարկել հայ ժողովրդի բազմադարյան հարուստ գրականության գանձերը։ Հարգելի հեղինակը իր այս աշխատությունը կազմելիս անմիջականորեն



աչքի առաջ է ունեցել ուսական գրականության հարուստ բիբլիոգրաֆիական փորձը և առաջնորդվել է գիտական առաջավոր մեթոդաբանությամբ։

Անցյալում մեզ մոտ, ընդհանրապես, զարգացած չի եղել գրականության բիբլիոգրաֆիա կազմելու գործը։ Միայնակներն են հրատարակել մի քանի նմանօրինակ գործեր, որոնք, սակայն, պակասավոր են, լուրջ գիտական սկզբունքի վրա չեն հիմնված և չափազանց սահմանափակ թվով հեղինակներն են ընդգրկում։ Մեզ մոտ չեն եղել բանահյուսության, հրապարակախոսության վերաբերյալ բիբլիոգրաֆիաներ։

Անցյալի հայ գրականության այս սղքատիկ բիբլիոգրաֆիական փորձը լուրջ խոչընդոտների առաջ է կանգնեցրել ներկա աշխատության հեղինակին (Հովհ. Պետրոսյան)։ Սակայն, ջնպած դրան, նա կարողացել է քրտնաջան աշխատավորությամբ հաղթահարել այդ խոչընդոտները և իրապես ստեղծել արժեքավոր, առաջին անգամ քաղաքացիություն նվաճող շնորհալի մի աշխատանք։ Աշխատասիրողն իր այս գործի մեջ ըստ է թողել հեղինակների կյանքին ու գործունեության վերաբերյալ աննոտացիաներ՝ տեղի սղության պատճառով։ Նկատի ունենալով այն հանգամանքը, որ մինչև օրս չկան հրապարակախոսության, գրականագիտության և ֆոլկլորի վերաբերյալ բիբլիոգրաֆիաներ, հեղինակը հավելվածների բաժնում տեղափոխել է որոշ նյութեր այդ մասին։

Աշխատության մեջ հեղինակները դասավորված են այբբենական կարգով։ Յուրաքանչյուր հեղինակի բիբ-

լիոգրաֆիան ունի հետևյալ բաժինները. 1) երկերի հրատարակությունները, 2) պարբերական մամուլում եղած ստեղծագործություններ, հոդվածներ, 3) քննադատական, գրախոսական և այլ նյութեր հեղինակի մասին, 4) հեղինակի երկերի թարգմանությունները և նրա կատարած թարգմանությունները, Հեղինակի գերքերը, հոդվածները նկարագրելիս տրված են որոշ անհոտացիաներ՝ թեմատիկան բացահայտելու և դյուրամբուհելի դարձնելու համար, Աշխատությունից օգտվելը դյուրացնելու համար, հեղինակը վերջում ավելացրել է հեղինակների և աղբյուրների ցանկ:

Հեղինակի ներկա հատորի հրատարակությանը մեր ընթերցող հասարակությունը, ուսուցչությունը, գրականագետները, ռասոնողությունը ձեռքի տակ ունենում են մի լավագույն բերրիագրաֆիական ուղեցույց՝ ու-

սումնասիրելու մեր անցյալի գրականության լավագույն նմուշները:

Հրատարակված գործը, իր գրական անուրանալի արժանիքներով հանդերձ, ունի նաև լուրջ թերություններ, Հիմնական թերությունն այն է, որ բերրիագրաֆիան սպառիչ և լիակատար չէ, որոշ հեղինակներ և նրանց գործերը չեն ընդգրկված:

Չնայած այս թերություններին, հարգո հեղինակի՝ Հովհ. Պետրոսյանի երկարատև և քրտնաշան աշխատանքը՝ «Հայ գրականության քրիստոգրաֆիա»-ի այս երկրորդ հատորը շնորհակալ և, ըստ ամենայնի, անժխտելի արժանիքներով օժտված մի գործ է, որը կօգնի մեր ընթերցող հասարակությանը է՛լ ավելի լավ ուսումնասիրելու մեր անցյալի կուսակների լավագույն գրական ժառանգությունները:

Ս.

